

# ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Արցախի Հանրապետության 26-րդ տարեդարձի առթիվ

02.09.2017



Սիրելի հայրենակիցներ:

Սրտանց շնորհավորում եմ բոլորիս Արցախի Հանրապետության Անկախության օրվա կապակցությամբ:

1991 թվականի սեպտեմբերի 2-ին իրականություն դարձավ արցախահայության դարավոր երազանքը: Արցախի ժողովուրդը պատմական ընտրություն կատարեց, ազդարարելով Արցախի Հանրապետության ծնունդը:

Ցանկացած ժողովրդի երազանքն է ապրել ազատ ու անկախ երկրում: Բայց իր պատմական հայրենիքում անկախ ապրելու իրավունքը հեշտությամբ չտրվեց արցախցիներին: Այն ձեռք բերվեց Արցախին պարտադրված պատերազմում անվերադարձ կորուստների ու մեր հերոսների արյան գնով: Համայն հայության աջակցությամբ և առաջին հերթին արցախահույժության անկոտրուն կամքի ու ամրակուռ ոգու շնորհիվ Արցախը նվաճեց սեփական հողում ազատ ու անկախ ապրելու միջազգային իր իրավունքը:

Արցախը հառնեց որպես փյունիկ: Ստեղծեց իր պետականությունը և չճանաչված պետությունների մեջ դարձավ օրինակելի ժողովրդավարական պետություն, ինչի մասին արձանագրվեց միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից:

Արցախի Հանրապետությունն ընթանում է միջազգային սկզբունքներին ու ժողովրդավարական նորմերին, ինչպես նաև համամարդկային ու ազգային արժեքներին համահունչ և իր գործունեությամբ առավելագույնս մոտեցել է միջազգային սուբյեկտների և բարի կամք դրսևորող պետությունների կողմից ճանաչում գտնելու պահին: Կարծում եմ մոտ է Արցախի Հանրապետության ճանաչման գործընթացի սկիզբը: Մաղթում եմ, որ Արցախը դառնա ճանաչված պետությունների համաշխարհային ընտանիքի արժանավոր անդամ:

Արցախի Հանրապետության անկախության տոնի կապակցությամբ շնորհավորում եմ ԱՀ Նախագահին, ԱՀ կառավարության ղեկավարին և ողջ արցախահայությանը:

Լուսավոր ապագա՝ Արցախի Հանրապետությանը: Թող հարատև խաղաղություն տիրի Արցախ աշխարհում ու կապույտ երկնի ներքո անցնի Արցախի սահմանները պաշտպանող մեր զինվորականների ծառայությունը:

Փա՛ռք Արցախի ժողովրդին:

Կեցցե՛ր Արցախի Հանրապետությունը:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ  
Հարություն Սարգսյան**

02.09.2017թ

